

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 21/3

30 օգոստոսի 2016թ.

Քննարկվեց Ա/Ձ Կարինա Կասպարովայի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 03.06.2016թ. թիվ 325385/02 որոշման դեմ:

Ա/Ձ Կարինա Կասպարովայի գանգատում բերված փաստարկները.

Գանգատաբերը հայտնում է, որ սույն թվականի հունիսի 30-ին ստացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 03.06.2016թ. թիվ 325385/02 որոշումը, որով 2015թ. տարեկան եկամուտների մասին հաշվարկն օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու համար ենթարկվել է վարչական պատասխանատվության: Հարկ է տեղեկացնել, որ տեղի է ունեցել թյուրիմացություն, քանի որ չլինելով հաշվապահ բաց է թողնվել սահմանված ժամկետը:

Գանգատաբերը նշում է նաև, որ լինելով բարեխիղճ հարկատու, ՀՀ օրենքով սահմանված առաջացած բոլոր հարկերը վճարել է ժամանակին, իսկ վերոհիշյալ տարեկան հաշվարկը հանձնել է ս/թ հունիսի 1-ին:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Կարինա Կասպարովան խնդրում է ազատել իրավախախտման համար նախատեսված տույժից:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 2745 գործը և ուսումնասիրելով վարչական իրավախախտման վերաբերյալ 31.05.2016թ. թիվ 2745 արձանագրությունը պարզել է, որ Ա/Ձ Կարինա Կասպարովան «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015թ. տարեկան եկամուտների հաշվարկը:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 03.06.2016թ. ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 325385/02 որոշումը (այսուհետ նաև Որոշում), որով Ա/Ձ Կարինա Կասպարովան ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկ վճարող ֆիզիկական անձինք պարտավոր են հարկային տարվա համար մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա

ապրիլի 15-ը ներառյալ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել տարեկան եկամուտների մասին հաշվարկ, իսկ ամբողջ հաշվետու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ավելացված արժեքի հարկ վճարող չհամարված հարկ վճարողները՝ տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկ:

Իր հերթին, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտարարագիրը կամ հաշվարկը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ, բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների, հարկային մարմիններ կամ օրենքով սահմանված դեպքերում տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Կարինա Կասպարովան 2015թ. տարեկան եկամուտների հաշվարկը մինչև 2016թ. ապրիլի 15-ը ներկայացվելու փոխարեն, այն փաստացի ներկայացվել է 2016թ. հունիսի 1-ին: Ա/Ձ Կարինա Կասպարովան 2015թ. տարեկան եկամուտների հաշվարկը ուշ ներկայացնելը պատճառաբանում է այն հանգամանքով, որ պարզապես մոռացել է: Վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող որևէ այլ հանգամանք սույն գործում առկա չէ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 03.06.2016թ. թիվ 325385/02 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ